

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋԱՌՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ԵՎ ՏԻՏՂՈՍ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՏՆԻ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋԱՌՐԴԻՆ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՈՐ Ի ՇՈՒՇԻ, յԱՐՑԱՄ**

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք, որ Արցախի Թեմական Խորհուրդը գաղափար է յղացել՝ արժանատրապէս նշելու Ձեր ծննդեան 45-ամեակը եւ առաջնորդական պաշտօնավարութեան 10-ամեակը:

Քուջածանօք եմք Ձեր արժանիքներին, նուիրումին եւ անճնաւիրութեան, որ հոգեւորական դառնալուց ի վեր ցուցաբերեցիք Ձեր ծառայութեան զանազան բնագաւառներում, մասնատրապէս որպէս Հոգեւոր Դեմարանի փոխտեսուչ եւ ապա Ս. Հովսիսիմէ վանքի վանահայր:

Սակայն ամէն բանից առաւել Ձեր անունը անըսկտելիօրէն կապուեց եւ անբաժանելի մաս՝ դարձաւ արցախեան գոյապայքարի, որին Ձեր անմիջական մասնակցութիւնը՝ բերեցիք որպէս վերահաստատուած Արցախի թեմի առաջին առաջնորդը:

Ահա տասը տարիներ սանեցին այդ պատմական օրումանից, եւ Դուք, Ձեր գործակից ու լծակից հոգեւորականների հետ միասին, երբեմն աննկարագրելի զրկանքների ու տառապանքների գնով, կարողացաք հոգեւոր կեանքից բացարձակապէս զրկուած մեր արցախահայութեանը

մօտեցնել Հայաստանեայց Ս. Եկեղեցուն եւ իր աստուածօրհնեալ ժառանգութեանը: Այսօր Արցախի թեմն իր ողջ կառույցով դարձել է Հայ Եկեղեցու կարեւորագոյն օղակներէից մէկը, ուր կայ կենդանի հաւատք, անձնութեան մոլորում եւ անսպասեալ եռանդ:

Ի գնահատութիւն Ձեր տասնամեայ սպասաւորութեան յրաշխաւորող Արցախի թեմի՝ այսօր Հայրապետական Կոնդակաւ Ձեզ շնորհում ենք

ԸՐ-ՔՈՒԹԵԸՆ պատիւ եւ տիտղոս:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզ պարգեւի քաջամողջ եւ երկար կեանք՝ ի փառս Արցախի օրհնեալ թեմի եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29 Մայիսի

Յամի Տեառն 1999 եւ ի թուին Հայոց ՌՆԽԸ

ի Մայրափանս Արքայ Էջմիածնի

Ընդ եամարաւ է/240

